ԱԲԲԱՍՅԱՆ ԴՐԱՄՆԵՐԻ ԹՈՂԱՐԿՈՒՄԸ ԽԱԼԻՖԱԹԻ «ԱՐՄԻՆԻԱ» ՆԱՀԱՆԳՈՒՄ VIII—X ԴԱՐԵՐՈՒՄ

Խ. Ա. ՄՈՒՇԵՂՅԱՆ

VIII դարի կեսին Արևելքում վերացավ Օմայանների տիրապետությունը։ Պայքարը գերագույն իշխանության համար, որ ծայր էր առել արաբական աշխարհում Աբբասյանների ու Օմայանների միջև, ավարտվեց Աբբասյանների հաղթանակով։ Օմայաններն ընդմիշտ հեռացան Արևելքի պատմության ասպարեզից և հաստատվեցին Իսպանիայում։ Այդ ժամանակներից մինչև X դարի կեսը դրամագործության զարգացումը Հայաստանում, ինչպես Մերձավոր ու Միջին Արևելքի մյուս երկրներում, մեծապես կապված է եղել Աբբասյանների կամ այսպես կոչված՝ «Արևելյան խալիֆաթի» դրամային տնտեսության հետ։ Հայաստանի այս շրջանի պատմության համար կարևոր նշանակություն ունեն տեղական կերտվածքի աբբասյան դրամների վկայությունները։ Բրավոր հիշատակարանները, դժբախտաբար, տեղեկություններ չեն տալիս, թե Հայաստանում Աբբասյանների օրոք ինչպիսի դրամներ են թողարկվել, ժամանակագրական ու քաղաքական իմաստի ինչպիսի արձանագրություններով են դրանք օժտված եղել։

Սակայն հնագիտության զարգացման շնորհիվ մեզ են հասել բազմաթիվ հին դրամներ ու դրամային գանձեր, որոնք արժեքավոր նյութ են ընձեռում երկրի դրամային շրջանառության, քաղաքական պատմության, միջազգային կապերի և շատ այլ հարցերի քննության համար։ Հայտնաբերված արևելյան դրամների զանգվածում ստվար խումբ են կազմում բուն Հայաստանում և Աղվանքում VIII—X դարերում թողարկված աբբասյան դրամները։

Բոլոր հաղորդած վկայություններին անդրադարձել են արևելագետներից շատերը։

Այդ դրամները հրապարակվել են Քրիստիան Մարտին Ֆռեհնի[1], *Գ. Յ. Տորենբերգի*[2], *Ֆ. Սորեի*[3], *Վ. Տիզենհաուզենի*[4], *Ստենլի Լեն Պուլի*[5], *Վ. Դորնի*[6],

---

[1] Ch. M. Fraehnii. Recensio Numorum Muhammedanorum, Petropoli, 1826, *էջ 210*; *տե՛ս նաև* Quinque centuriae Numorum anecdotorum Chalifarum cum Umeijadarum tum Abbasidarum, Petropoli, 1837, *էջ 283—284։*

[2] C. J. Torenberg, Numi Cufici Regii Numophylacii Holmiensis, Quos omnes in terra Sueciae Repertos, Upsaliae, 1844, *էջ 6, 7, 79, 89—92, 94, 96, 100—103, 105, 247*; C. J. Torenberg. Symbole ad rem Numariam Muhammedanorum, IV. Upsaliae, 1862, *էջ 51։*

[3] F. Soret, Elements de la Numismatique Musulmane, Geneve, 1868, Extrait de la Revue de la Numismatique, Belge, 1864—65, *էջ 95։*

[4] B. Тизенгаузен, Монеты Восточного халифата, СПб., 1873, *էջ 323, 326, 338—340։*

[5] St. Lane Poole, Catalogue of oriental coins in the British Museum, I, London, 1875.

[6] B. Dorn, Inventaire des monnates (musulmanes) des Khalifes orientaux, St. Petersbourg, 1877.

Հ. Լավուայի[7], Ա. Վայլի[8], Իսմայիլ Ղալիբ Եղհեմի[9], Հ. Նյուտցելի[10], Ալ. Մարկովի[11] և ուրիշների աշխատություններում։

Սակայն անցյալում Հայաստանի աբբասյան դրամները ուսումնասիրվել են Արաբական Խալիֆաթի դրամագիտական ողջ նյութի ընդհանրության մեջ։ Հայաստանին վերաբերող նրանց վկայությունները հատուկ քննության չեն ենթարկվել։ Առաջին մեծ գործն այդ առումով կատարեց Ռոման Ֆասմերը։

Նկատի ունենալով մինչև XX դարի 30-ական թթ. թանգարաններում հավաքված աբբասյան դրամների Արմինիայում թողարկված օրինակները, Ռ. Ֆասմերը մանրազնին քննեց դրանց վրա դրոշմված արձանագրությունները և գրավոր աղբյուրների բաղդատությամբ ստեղծեց Հայաստանում 750—887 թթ. իշխած արաբական էմիրների ժամանակագրությունը[12]։

Ռ. Ֆասմերի այդ գործը մինչև օրս էլ իր տեսակի մեջ մնում է կատարյալը և մեծապես կարևոր է Հայաստանի քաղաքական պատմության տվյալ շրջանի համար։ Հետագայում հանդես եկավ դրամագետ Ե. Ա. Պախոմովը, որին վիճակվել էր շուրջ 60 տարի հավաքել և ուսումնասիրել Անդրկովկասում հայտնաբերված հին դրամներն ու դրամային գանձերը։ Օգտվելով Ռ. Ֆասմերի աշխատության արդյունքներից, Ե. Ա. Պախոմովը դասակարգեց արաբական տիրապետության օրոք Անդրկովկասում թողարկված բոլոր դրամները, դրանց մանրամասն նկարագրություններով հանդերձ[13]։ Ե. Ա. Պախոմովը իր մի շարք աշխատություններում հայտնեց այն միտքը, որ արաբների կողմից Արմինիայում դրամների թողարկման գլխավոր կենտրոնը եղել է Աղվանքի մայրաքաղաք Պարտավը[14]։ Սակայն Ե. Ա. Պախոմովի տեսակետը մասնագետների շրջանում լայն ընդունելություն չգտավ։ Հիրավի, արաբական տիրակալության Արմինիա նահանգում Պարտավից բացի կային նաև առևտրի և արհեստագործության այլ նշանավոր քաղաքներ, որոնցում զարգացող ապրանքափոխանակությունը պահանջում էր դրամների մասսայական թողարկում։ Այդպիսի վաճառաշահ կենտրոն էր նաև Դվին քաղաքը, ուր նույնպես, ամենայն հավանականությամբ, դրվագվում էին աբբասյան դրամներ՝ ողջ նահանգի անունով[15]։ Վերջին տարիներս մասնագետները հատուկ անդրադարձան այդ

---

[7] H. Lavoix, Catalogue des monnaies musulmanes de la Bibliotheque Nationale, I, Paris, 1877.

[8] A. Weyl, Verzeichnis der reichhaltigen Sammlung orientalischen Münzen des Fürsten G., Berlin, 1885.

[9] I. Ghalib Edhem, Catalogue des monnaies des Khalifes (Musee Imperial Ottoman), Constantinopole, 1891.

[10] H. Nützel, Königliche Museen zu Berlin. Katalog der orientalischen Münzen, I, Berlin, 1898.

[11] А. Марков, Инвентарный каталог мусульманских монет императорского Эрмитажа, СПб., 1896.

[12] R. Vasmer, Chronologie arabischen Statthalter von Armenien unter den Abbasiden, von as-Saffach bis zur Kronung Aschots I, 750—887, Wien, 1931.

[13] Е. А. Пахомов, Монеты Азербайджана, вып. I, Баку, 1959, էջ 35—79; вып. II, Баку, 1963, էջ 81—156։

[14] Е. А. Пахомов, Монетные клады Азербайджана и Закавказья, Баку, 1926, էջ 22—23 (Труды общества обследования и изучения Азербайджана, вып. 3).

[15] Х. А. Мушегян, Денежное обращение Двина по нумизматическим данным, Ереван, 1962, էջ 21—23։

հարցին և մեկ անգամ ևս ընդգծվեց Ռ. Ֆասմերի ու նրա հետնորդների միանգամայն իրավացի պնդումը, որ աբբասյան դրամների թողարկումը Արևելյան Անդրկովկասում եղել է ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ Աղվանքում և Արևելյան Վրաստանում, որոնք մտնում էին Արմինիա անունը կրող նահանգի մեջ[16]։

Ե. Ա. Պախոմովի հավաքած և հրապարակած նյութերը թեև անհամեմատ ծավալուն էին, քան անցյալ ժամանակներինը, բայց այդուհանդերձ նրա տեսադաշտից դուրս են մնացել Դվին քաղաքի պեղումներից ի հայտ եկած աբբասյան դրամներն ու դրամային գանձերը։ Ավելին, նրա քննությունից դուրս են մնացել նաև Անի քաղաքի, ինչպես նաև Ամբերդ և Գառնի ամրոցների հնագիտական պեղումներից հայտնաբերված աբբասյան արծաթյա ու պղնձյա դրամները։

Դրանք բոլորը պահվում են Հայաստանի պատմության պետական թանգարանի դրամագիտության բաժնում։ Արդ, հաշվի առնելով նորությունները և վերանայելով անցյալի հրատարակությունները, հնարավոր է դատել VIII—X դարերում Հայաստանում թողարկված աբբասյան դրամների, ինչպես նաև դրանց արձանագրությունների ու ժամանակագրության մասին։

Եվ այսպես, VIII դարի երկրորդ կեսին Օմայաններն անվերադարձ հեռացել էին Արևելքից։ Քաղաքական ասպարեզում կերիշխանությունն անցել էր Աբբասյանների ձեռքը։ Այդ իրողությունն արտացոլված է վաղ աբբասյան դրամներով։ Բազմաթիվ փողերանոցներում միաժամանակ դրվագվել են աբբասյան դրամներ։ Սակայն դրանց թողարկումը Աբբասյանների կողմից սկսվեց իշխանության գլուխն անցնելուց հետո ոչ անմիջապես, այլ մի փոքր ուշացումով (տարբեր նահանգներում տարբեր չափով)։

Աբբասյան առաջին խալիֆ Աբուլ-Աբբաս աս-Սաֆֆախի (132—136=750—754) իշխանության տարիներին Արմինիայում դրամներ չեն թողարկվել։ Համենայն դեպս, մինչև օրս այդպիսիները հայտնի չեն։ Աբբասյան դրամների զանգվածային թողարկումը Հայաստանում սկսվել է խալիֆ Աբու-Ջաֆար Աբդ-Ալլահ ալ-Մանսուրի գահակալության (136—158=754—775) տարիներին։ Նկատենք, որ թեև սկզբնական շրջանում օմայան դրամների թողարկումը դադարեցված էր, բայց շրջանառության ոլորտից դրանք դուրս չէին հանվել։ Ալ-Մանսուրի և նրա անմիջական հաջորդների ժամանակներում օմայան դրամների առկայությունը շրջաբերության մեջ ակնհայտ էր։ Հին (օմայան) դրամները նոր (աբբասյան) դրամների հետ հավասարապես ընդունվում էին առևտրում։ Եվ այդ երևույթը զարմանալի չէ։ Աբբասյանները չէին վերցրել օմայան խալիֆ Աբդ-ալ-Մելիքի ռեֆորմով սահմանված արաբական դրամա-կշռային սիստեմը։ Աբբասյանները ևս, Օմայանների նման, թողարկում էին ոսկյա, արծաթյա, պղնձյա դրամներ։ Ոսկե դրամը շարունակվում էր անվանվել դինար և դրվագվում էր միջազգային շուկայում Օմայանների ժամանակներից ընդունված 4,25 գրամ քաշով։ Արաբական ոսկե դրամը Աբբասյանների վաղ ժամանակներում դրվագվում էր միայն խալիֆաթի մայրաքաղաքում՝ Բաղդադում, որի անունը մինչև 199 (814/15) թ. դինարների վրա չէր արձանա-

[16] Г. Н. Джапаридзе, Из истории арабской нумизматики и метрологии IX—X вв., автореферат диссертации, Тбилиси, 1968, էջ 7—9։

դրվում։ Հետագայում Բաղդադում թողարկված դրամների վրա վոզերանոցի անունը հիշատակվում էր مدينة السلام «խաղաղության քաղաք» ձևով։

Հայաստանում և հարևան երկրներում VIII դարի երկրորդ կեսին ոսկե դրամներ չեն թողարկվել։ Ընդհանրապես վաղաբբասյան ոսկե դրամները հազվադեպ են և ապրանքափոխանակության գործարքներում նկատելիորեն հանդես չեն եկել։

Հիմնական դրամային միավորը, ինչպես և անցյալում, եղել է դիրհեմ կոչված արծաթ դրամը, որը մասսայաբար թողարկվում էր խալիֆաթի տարբեր երկրներում, այդ թվում և Հայաստանում։ Պահպանելով 696/97 թթ. դրամային ռեֆորմով հաստատված հատուկ կշռային չափը՝ 2,97 գրամ արծաթ յուրաքանչյուր դիրհեմի համար, Աբբասյանները բարձր էին պահում նաև արծաթյա դրամային միավորի արժանապատվությունը մետաղի զտության առումով։ Ինչ վերաբերում է պղնձյա դրամներին, ապա դրանք, ինչպես միշտ, Աբբասյանների կողմից ևս թողարկվում էին ներքին շուկայի, մանր առուծախի համար։ Պղնձյա դրամները կայուն կշռային չափերով հանդես չէին գալիս։ Դրամագյուտերից ելնելով կարելի է ասել, որ աբբասյան պղնձյա դրամները թողարկվել են մեծ մասամբ 3—5 գրամ քաշով։ Պղնձյա դրամն արաբական աշխարհում, ինչպես Օմայանների ժամանակ, կոչվում էր ֆելս (բյուզանդական Φολις (ֆոլիս) բառից, որ հայերի մոտ հայտնի էր «փող» ձևով)։ Ընդհանուր առմամբ, վաղաբբասյան ժամանակներում թողարկվող դրամների թե՛ կշռային չափերը, և թե՛ անվանումները չէին փոխվել։ Չէին փոխվել նաև դրամների թողարկման տեխնիկական հնարավորությունները, դրամագործության աշխատանքային գործիքները։ Դրվագումը կատարվում էր ձեռքի աշխատանքով։ Զուլման կաղապարների և կնիքների պատրաստման եղանակները նույնն էին մնացել։ Դրամագործության արհեստանոցներում, ինչպես անցյալում, աշխատանքը բաժանված է եղել տարբեր մասնագիտության (ձուլող, դրվագող ու ստուգող և այլ) վարպետների միջև։ Վարպետներից մի քանիսը պատրաստում էին կնքման ենթակա դրամների հատաձույլերը, մյուսները նախապես փորագրված կնիքների միջոցով կատարում էին դրվագումը, երրորդները՝ ստուգում կշիռը և մետաղի զտությունը։ Այնուհետև կատարվում էին դրամային միավորների հաշվարկը, պահպանումը, հանձնումը և այլ աշխատանքներ, որոնք բնորոշ էին դրամագործությանը դեռևս անցյալից։ Սակայն փոխվել էին իշխողները և այդ փոփոխությունն էր, որ արտացոլվում էր թողարկվող դրամների վրայի արձանագրություններում։ Աբբասյանները, հավատարիմ մնալով ուղղափառ իսլամին, դեռ էին պահում իրենց դրամները կենդանական կամ մարդկային պատկերներից։ Դրամների վրա երկու կողմից դրոշմում էին քուֆի գրով արաբերեն արձանագրություններ։ Նախապես նշենք, որ ոսկե ու արծաթե դրամները թողարկվում էին, ինչպես անցյալում, բացառապես խալիֆների հրամանով։ Տեղական էմիրները իրավունք ունեին թողարկել միայն պղնձյա դրամներ։

Ժամանակագրական առումով Աբբասյանների կողմից Արմինիայում թողարկված վաղագույն արծաթ դրամը վերաբերում է հիջրայի 143 (=մ. թ. 760/761) թ.։ Նրա վրա պահպանվել են քուֆի գրով հետևյալ արձանագրությունները.

Ա կողմ. կենտրոնում, շրջագծի մեջ, երեք տողով.

لا اله الا

الله وحده

لا شريك له

շուրջը՝

بسم الله ضرب هذا الدرهم بارمينية

سنة ثلث و اربعين ت مية

և այդ ամենը վերցված է չորս եզրափակ շրջագծերի մեջ, որոնց միջև նշված են երեք զույգ և երեք կենտ փոքրիկ օղակներ։

Բ կողմ. կենտրոնում, շրջագծի մեջ, երեք տողով.

محمد

رسول

الله

շուրջը՝

محمد رسول الله ارسله بالهدى و دين

الحق ليظهره على الدين كله و لو

كره المشركون

և այս ամենը վերցված է երկու շրջագծերի մեջ, որոնց միջև նշված են հինգ փոքրիկ օղակներ, միմյանցից հավասար հեռավորության վրա։

Արծաթյա այս դրամը (կշիռը՝ 2,91 գրամ, տրամագիծը՝ 27 միլիմետր) ներկայումս պահվում է Պետական էրմիտաժում (Լենինգրադ)[17]։ Նույն արձանագրություններով արծաթյա դրամներից ուրիշ օրինակներ պահվում են նաև այլ թանգարաններում[18]։ Ինչպես տեսնում ենք, դրամի մի կողմի (Ա) կենտրոնում ներկայացված է իսլամի կրոնական բանաձևի առաջին մասը երեք տողով, այն է՝ «Չկա աստվածություն բացի Ալլահից միակ չկա նրան հավասարը»։ Դրա շուրջը արձանագրված է, որ հանուն Ալլահի դրվագված է այս դիրհեմը Արմինիայում, 143 թ.։ Ըստ իմաստի և ձևավորման այս արձանագրությունները կրկնում էին Օմայանների ժամանակներից հայտնի կրոնական դոգմաները, և Աբբասյանները նորություն հանդես չէին բերում։ Սակայն ի տարբերություն Օմայանների, դրամների վրա Աբբասյանները այլևս չէին հիշատակում Ղուրանի 112-րդ գլխից քաղված խոսքերը։ Աբբասյանները իբրև դեվիզ ընտրել էին محمد رسول الله («Մուհամմեդն առաքյալն է ալլահի») ասույթը և դրոշմելով այն դրամի հակառակ (Բ) կողմի կենտրոնում, դրանով իսկ ամբողջական էին դարձրել իրենց հավատի բանաձևը իր երկու հիմնական մասերով։ Հենց այդտեղ էլ շրջանավոր գրությամբ ներկայացվում էր Ղուրանի IX գլխի XXXIII ոտանավորից և LXI գլխի IX ոտանավորից քաղված ասույթն այն մասին, որ Մուհամմեդը ալլահի առաքյալն է, նրա կողմից ուղարկված առաջնորդությամբ և մաքուր հավատով, որպեսզի այդ հավատը հաղթող դարձնի բոլոր այլ հավատների վրա հակառակ կռապաշտների դիմադրության։ Ըստ էության այս շրջանավոր արձանագրությամբ շարունակվում էր նույն կողմի կենտրոնական գրության միտքը, որը և դարձավ առավել բնորոշ արբասյան դրամների համար։ Ուշագրավ է նաև այն, որ այս սկզբնական

[17] Государственный Эрмитаж, Рукописный каталог Восточных монет, № 41/48.

[18] В. Тизенгаузен, № 727; H. Lavoix, I, № 610; St. Lane Poole, I, № 28; H. Nützel, I, № 638.

շրջանում դրամների վրա տակավին չէին արձանագրվում աշխարհիկ բնույթի անուններ։ Այդպես վարվում էին Օմայանները և նույնը շարունակեցին առաջին Աբբասյան խալիֆները։ Բացառապես կրոնական իմաստի (մուսուլմանական) վերը հիշատակված արձանագրություններով արծաթ դրամներ Արմինիայում թողարկվել են հիջրայի 144—151 (761/62—768/69) թթ.[19]։ Աղվանքում այդ նույնը դիտվում է հիջրայի 145—151 (762/63—768/69) թթ. դրամների վրա[20]։ Առանց իշխանական անունների հիշատակման արծաթյա դրամների թողարկումը արտակարգ չէր Արմինիա նահանգի համար։ Այն ընդունված էր ողջ Խալիֆաթում, ըստ որում բացառապես թանկարժեք մետաղների համար։ Ինչ վերաբերում է պղնձյա դրամներին, ապա հիջրայի 142 (759/60) և 143 (760/61) թթ. Պարտավում թողարկվել են ֆելսեր աբբասյան էմիր Յազիդ իբն Ուսայդի (աս-Սուլամի) անվան արձանագրությամբ։ Դրանք Արմինիայում թողարկված վաղագույն աբբասյան պղնձյա դրամներն են։

VIII դարի 60-ական թթ. աբբասյան դրամների վրա արձանագրությունները դառնում են առավել ընդարձակ, որով և նոր տվյալներ են ներկայացնում քաղաքական պատմությանը։ Արձանագրությունների ընդարձակությամբ ձեռք բերելով որոշակի ինքնատիպություն, հենց այդ ժամանակվանից աբբասյան դրամները հիմնովին կտրվեցին անցյալի սովորական, հաճախ զուտ կրոնական բնույթի ասույթներ ներկայացնող սխեմաներից։ Այսպես, խալիֆ ալ-Մանսուրը դրամների վրա արձանագրում է իր որդու՝ Մուհամմեդ ալ-Մահդիի անունը, ներկայացնելով նրան իբրև ուղղահավատների տիրոջ որդին, այսինքն՝ Խալիֆաթի գահի թեկնածուն։ Ավելին, դրամների վրա արձանագրություններով հիշատակվում են ոչ միայն գահաժառանգների, այլև նահանգային փոխարքաների անունները։

Արմինիա նահանգում այդպիսի դրամներ թողարկվել են թե՛ արծաթից, և թե՛ պղնձից, որոնցից առանձին օրինակներ պահվում են տարբեր թանգարաններում։

Ապրանքափոխանակության և դրամների թողարկման գլխավոր կենտրոնները Դվին և Պարտավ քաղաքներն էին, չնայած առանձին դեպքերում դրամներ հատվում էին նաև այլ քաղաքներում։ Այս շրջանում դրամների վրա դրոշմած արձանագրությունները ներկայացնում էին հետևյալ բնորոշ տվյալները։

Արմինիա, դիրհեմ, 153 (770) թ.

Ա կողմ. կենտրոնում, շրջագծի մեջ, երեք տողով.	Բ կողմ. կենտրոնում, շրջագծի մեջ, երեք տողով.
لا اله الا	مما أمر به
الله وحده	المهدى محمد
لاشريك له	بن امير المومنين

[19] В. Тизенгаузен, №№ 728, 742, 753, 763, 775, 785, 2763а; H. Lavoix, №№ 611, 612; H. Nützel, №№ 639—643; Государственный Эрмитаж, Рукописный каталог восточных монет, №№ 42/45, 44/72, 44е/82а, 45/87, 46/103а, 47/109; St. Lane Poole, I, էջ 29; Р. Шерцль, Описание медалей и монет имп. Харьковского университета, Харьков, 1912, №№ 5585, 5896.

[20] H. Nützel, I, № 635; St. Lane Poole, I, էջ 25—26; В. Тизенгаузен, №№ 754, 766, 776; Государственный Эрмитаж, Рукописный каталог, №№ 35/65а, 36/66, 110/37; Е. А. Пахомов, Монеты Азербайджана, вып. I, էջ 66։

Շուրջը՝	Շուրջը՝
بسم الله ضرب هذا الدرهم بارمينية سنة ثلث وخمسين ومئة	محمد رسول الله ارسله بالهدى ودين الحق ليظهره على الدين كله ولو كره المشركون
և այս ամենը երիզափակ շրջագծերի մեջ։	վերևում, երիզագծի վրա նշված է بكار

Դրամի Բ կողմի եզրագծին մոտ նշված بكار անունը վերաբերում է Հայաստանի նահանգապետ Մուսլիմի որդի Բակկարին, որից հետո այդ պաշտոնին նշանակվեց Քախտաբի որդի ալ-Հասանը։ Վերջինիս անունը հիշատակված է 154 (770/71)—158 (774/75) թթ. Աղվանքում և Հայաստանում թողարկված դրամների վրա։ Հետագայում, Մուհամմեդ ալ-Մահդիի (158—169=775—785) խալիֆության տարիներին, դրամների վրա հաճախ մաղթանքի صلى الله عليه و سلم («թող փառաբանի ու պահպանի նրան ալլահը») խոսքերի հետ միաժամանակ նշվում էին նրա երկու գահաժառանգների՝ ալ-Հադիի ու Հարունի անունները, ըստ որում առաջինի համար արձանագրվում էր ولي عهد المسلمين («գահաժառանգը մուսուլմանների»), իսկ երկրորդի համար պարզապես ابن امير المومنين («որդին ուղղահավատների տիրոջ»)։ Այսպիսի արձանագրությունները, որ դրոշմում էին դրամի վրա, անփոփոխ մնացին խալիֆ Մուսա ալ-Հադիի (169—170=785—786) օրոք, երբ գահաժառանգի տիտղոսը վերաբերում էր Հարունին։ Վերջինիս վիճակված էր մեկ տարի անց Աբբասյանների գահի վրա փոխարինելու իր եղբորը։ Դրամների վրա եղած գրությունները դառնում են ավելի ծավալուն Հարուն-առ Ռաշիդի (170—193=786—809) խալիֆայության տարիներին։ Հիշատակվում էին նախ Հարունի ավագ որդու՝ Մուհամմեդ ալ-Ամինի և այնուհետև կրտսեր որդու՝ ալ-Մամունի անունները։ Նախապատվությունը տրված էր ալ-Ամինին, որի անունը դրամների վրա ներկայացվում էր թե՛ իբրև գահաժառանգի, և թե՛ իբրև ուղղահավատների տիրոջ (խալիֆի) որդու. الامين ولي عهد المسلمين. الامير محمد بن امير المومنين. Իսկ իր՝ խալիֆ Հարուն առ-Ռաշիդի անունը դրամների վրա արձանագրվում էր լակոնիկ ձևով. الخليفة هرون. Այդ ձևը որոշ շեղումներով դիտվում է նրա անմիջական հաջորդի՝ Մուհամմեդ ալ-Ամինի (193—198=809—813) խալիֆայության տարիներին. الخليفة محمد կամ الخليفة محمد امير المومنين և կամ թե՛ الامين محمد امير المومنين կամ արձանագրություններով։ Ուշագրավ է, որ ի տարբերություն այլ երկրամասերի, Հայաստանում և Աղվանքում մինչև հիջրայի 195 (810/11) թ. դրամների վրա չէր հիշատակվում ալ-Մամունի անունը, մինչդեռ Միջին Ասիայում, օրինակ, ալ-Մամունը, դեռևս Հարունի կենդանության օրոք ներկայացվում էր որպես երկրորդ գահաժառանգ՝ الامير المامون عبدالله بن امير المومنين ولي عهد المسلمين. Այս իրողությունը հազիվ թե պատահական։

թյուն համարվի։ Այն լռելյայն վկայում է Հայաստանում ալ-Մամունի կողմնակիցների բացակայությունը։ Մեկ տարի անց իրադրությունը փոխվում է. հիջրայի 196 (811/12) թ. Աղվանքում ալ-Մամունը դրամների վրա հիշատակվում է արդեն որպես խալիֆ, չնայած ալ-Ամինը դեռ մնում էր խալիֆաթի գահին։ Սակայն Հայաստանի տարբեր գավառներում ալ-Մամունի իրավունքը միաժամանակ չընդունվեց։ Պահպանվել են նույն տարեթվով դրամներ, թողարկված Ապահունիքում, որոնց վրա արձանագրված է ալ-Ամինի անունը. الامين محمد امير المومنين. Հետագայում, երբ արդեն ալ-Մամունը դարձել էր Աբբասյանների գահի անբաժան տիրակալը, Հայաստանում դրամների վրա հաճախ արձանագրվում էր իբրև մահմեդականների հոգևոր հայրը՝ الامـــام المامون امير المومنين. Մեծարանքի այս ձևը շատ բնորոշ դարձավ ալ-Մամունի համար, թեև թողարկվում էին դրամներ, որոնց վրա նա հիշատակվում էր պարզապես الخليفة المامون «խալիֆ Մամուն» ձևով։

Աբբասյան դրամների վրա արձանագրությունները շատ ավելի ընդարձակ դարձան ալ-Մամունի իշխանության տարիներին, մասնավորապես հիջրայի 199 (814/15) թ. հետո։

Սակայն արձանագրությունների ծավալուն դառնալը կատարվում էր զուտ կրոնական բնույթի նոր լոզունգների առաջ քաշման նպատակով։ Թևավորված իր հաղթանակներով, ալ-Մամունը միաժամանակ ուղղափառ իսլամի մոլեռանդ ջատագովը եղավ։ Դրամների վրա մինչ այդ եղած և մշտապես կրկնվող կոչերին ավելացան նաև Ղուրանի XXX գլխի IV և V ոտանավորներից քաղված խոսքերը لله الامر من قبل ومن بعد و يومئذ يفرح المومنون بنصر الله։ «Ալլահին է պատկանում իշխանությունը նախապես և վերջում ու կգա ժամանակ, երբ ուղղահավատները կուրախանան Ալլահի օգնությամբ»։ Բացարձակապես կրոնական իմաստի այս խոսքերը արձանագրվում էին դրամի կենտրոնական մասի շուրջը և դրանով իսկ մի կողմի վրա դիտվում էին երկու շրջանավոր գրություններ՝ ներքին, որով հաղորդվում էր ժամանակի և տեղի մասին և արտաքին, որը ներկայացնում էր Ղուրանից քաղված վերոհիշյալ մաղթանքը։ Հետագայում այդ նորամուծությունը ընդունվեց ու լայնորեն տարածվեց, դառնալով կանոնիկ ձև ոչ միայն Աբբասյանների, այլև Խալիֆաթի քայքայման շրջանում մահմեդական շատ դինաստիաների դրամների համար։ Խալիֆ ալ-Մամունի (195—218=811—833) գահակալության վերջին տարիներին Հայաստանում դրամների վրա հիշատակվեց նրա որդու՝ ալ-Աբբասի անունը։ العباس بن امير المومنين.

Խալիֆաթի քայքայման պրոցեսը, որ IX դարի 30-ական թթ. բացահայտ էր դարձել, առաջ բերեց նոր պահանջներ դրամների վրա ներկայացվող արձանագրությունների համար։ Խալիֆ ալ-Մուտասիմ Բիլլահի (218—227=833—842) իշխանության տարիներին վերջ տրվեց ծավալուն արձանագրություններին, որոնք մեծապես կրճատվեցին։ Սակայն այդ կրճատումը կատարվեց ոչ երբեք իսլամի կրոնական կոչերի հաշվին, այլ բացարձակապես աշխարհիկ անունների վերացման նպատակով։ Լրիվ պահպանելով Ղուրանից քաղված ասույթները, որոնցով այնքան առատ օժտված էին աբբասյան դրամ-

ները, նոր թողարկված դիրհեմների ու ֆելսերի վրա այլևս չէին հիշատակվում տեղական նահանգապետների և նրանց փոխանորդների անունները։ Այսպիսով հիջրայի 218 (833) թ. աբբասյան դրամների վրա բացի խալիֆի և նրա գահաժառանգների անուններից ուրիշ և ոչ մի անուն պաշտոնապես չէր արձանագրվում։ Բացի դրանից, IX դարի 30-ական թթ. դրամների վրա խալիֆները հիշատակվում էին նոր ձևով, ոչ թե անձնանուններով, ինչպես ալ-Մամունի և նրա նախորդների ժամանակներում, այլ իրենց պատվանուններով, որոնք արտահայտում էին իսլամի դրոշը կրող վեհապետների փառաբանության զանազանությունները։ Այդ առումով էլ խալիֆ ալ-Մուտավաքիլի գահակալության (232—247=847—861) տարիներին Հայաստանում և Աղվանքում թողարկված դրամների վրա արձանագրված են միայն երկու իշխանական անուններ, մի կողմից վեհապետի պատվանունը, իսկ մյուս կողմից՝ նրա որդու (գահաժառանգի) Աբու-Աբդալլահի անձնանունը։ Այդ սկզբունքը շարունակվում է խալիֆ ալ-Մուստաին Բիլլահի (248—252=862—866) օրոք և այնուհետև հաջորդող բոլոր աբբասյան խալիֆների ժամանակ դառնում մշտապես ընդունված՝ ձև։

Արդեն IX դարի վերջերին և X դարում Խալիֆաթի ներսում առաջացած առանձին կիսանկախ ու անկախ էմիրությունները ևս որդեգրում են դրամների վրա իշխանական անունների հիշատակման այդ ձևը. ըստ որում թե՛ խալիֆի պատվանունը, և թե՛ նոր դինաստի անունը դրոշմում էին դրամի կենտրոնական մասում, հավատի խոսքերի տակ։

Այդ ժամանակներում աբբասյան խալիֆները կորցրել էին իրենց երբեմնի ունեցած աշխարհիկ դերն ու նշանակությունը և նոր առաջացած դինաստիաների կողմից ընդունվում էին լոկ որպես իսլամական աշխարհի հոգևոր առաջնորդներ։ Սաջյանները Հայաստանում և Աղվանքում, Ջաֆարյանները Վրաստանում դրամներ էին թողարկում, որոնց վրա մի կողմից հիշատակվում էին խալիֆի պատվանունը, իսկ մյուս կողմից՝ իրենց իշխանապետի անունը։ Խալիֆների պատվանունների հիշատակությունը նոր դինաստիաների կողմից թողարկվող դրամների վրա հաճախ զուտ ձևական բնույթ էր կրում։ Սաջյանների դրամները հաղվադեպ են և թողարկվել են մեծ մասամբ արծաթից ու ոսկուց։ Ներքին շրջանառության համար անհրաժեշտ պղնձյա դրամներ ո՛չ Սաջյանները, և ո՛չ էլ նրանց հաջորդները Հայաստանում չեն թողարկել։ Սաջյանների արծաթյա դրամները, լինելով շատ նման աբբասյան արծաթ դրամներին, շրջանառության մեջ աննկատելի էին մնում վերջիններիս հոծ զանգվածում, որոնք լայնորեն տարածված էին միջազգային առևտրում։

Բարձրագույն իշխանական անունների փոփոխությունները դրամների վրա արտացոլում էին քաղաքական կյանքում կատարված փոփոխությունները։ Սակայն կային անուններ, որոնք արձանագրվում էին դրամների վրա միշտ մնալով անփոփոխ, ինչպես Օմայանների, այնպես էլ Աբբասյանների ժամանակ։ Դրանք երկրների ու քաղաքների անուններն էին։ Դրամի վրա բառացիորեն արձանագրվում էր, թե որտեղ և երբ է այն դրվագվել։ Տեղանունների հիշատակությունները ցույց են տալիս, որ շուրջ երկու հարյուր տարի աբբասյան դրամների թողարկումը կատարվել է առավելապես Արմինիա նահանգի անունով։ Քաղաքներից դրամներով հայտնի էին Դվինը, Պարտավը, Դերբենդը, Մաադին Բաջունայսը և ուրիշներ։ Սակայն թողարկումը կատարվել է քիչ թե շատ ընդհատումներով։ Բացառված չէ, որ որոշ տարիներից դրամագիտական վկայու-

Թյուններ պարզապես չեն պահպանվել։ Աբբասյան դրամների թողարկումը արձանագրվել է հետևյալ տեղանուններով.

Փողերանոցների անվանումները և նրանց գործունեության տարեթվերը
(ըստ պահպանված դրամների)

1.	اليزيدية	ալ-Յազիդիա,	հիջրայի	140 (757/58)—150 (767/68) թթ.
2.	بردعة	Պարտավ	»	142 (759/60)—330 (941/42)
3.	ارمينية	Արմինիա	»	143 (760/61)—332 (943/44)
4.	اران	Աղվանք	»	145 (762/63)—197 (812/13)
5.	الباب	Դերբենդ	»	153 (770) —178 (794/95)
6.	دبيل	Դվին	»	159 (775/76)—240 (854/55)
7.	هرون اباد	Հարունաբաղ	»	168 (784/85)—169 (785/86)
8.	الهرونية	ալ-Հարունիա	»	169 (785/86)—171 (787/88)
9.	معدن باجنيس	Ապահունիք	»	183 (799/800)-216 (831/32)
10.	مدينة اران	քաղաք Աղվանք	»	197 (812/13)—220 (835)
11.	تفليس	Թիֆլիս	»	210 (825/26)—331 (942/43)
12.	ارض الخزر	Արդ-ալ-Խազար	»	223 (837/38)—(Եզակի օրինակ)
13.	بد لمس	Բիթլիս	»	301 (913/914) «

Այսպիսով, եթե նկատի առնենք բուն Հայաստանում և Աղվանքում աբբասյան դրամների թողարկման հիմնական կենտրոնների մասին պահպանված դրամագիտական վկայությունները, ապա որոշակի է, որ դրվագումը կատարվել է առավելապես Արմինիա անունով, ըստ որում դրեթե անընդմեջ։ Փողերանոցների մնացած անունները դրամներով ներկայանում են համեմատաբար նվազ չափով։

Հազվագյուտ վկայություններից է հիջրայի 140 (757—58) թ. ալ-Յազիդիա քաղաքի անունը, ուր Աբբասյանները դրվագել են պղնձյա դրամներ։ Հաստատապես հայտնի չէ, թե որտեղ է գտնվել այդ ալ-Յազիդիա քաղաքը։ Պրոֆեսոր Ե. Ա. Պախոմովի կարծիքով, այն հավանաբար պետք է լինի Նամախու շրջանում, Գյուլիստան կոչվող ամրոցի մոտ[21]։ Հնագիտական պեղումները կարող են առաջիկայում պարզել այդ հարցը։ Արևելյան Վրաստանում աբբասյան դրամների թողարկումը կատարվել է ընդհատումներով և շատ ավելի քիչ, քան բուն Հայաստանում։ Դրամների դրվագման միակ կենտրոնը Վրաստանում եղել է Թիֆլիս քաղաքը։ Վերջինիս անունից պահպանվել են աբբասյան արծաթյա դրամներ հիջրայի 210 (825—26), 248 (862—63), 250 (864—65), 287 (900), 294 (906—67), 297 (909—10), 298 (910—11), 304 (916—17), 307 (919—20), 311 (923—24), 312 (924—25), 330 (941—42) և 331 (942—43) տարեթվերով[22]։

---

21 Е. А. Пахомов, Монеты Азербайджана, I, էջ 60։

22 Е. А. Пахомов, Монеты Грузии, Тбилиси, 1970, էջ 39—45; Государственный Эрмитаж, Рукописный каталог восточных монет, №№ 889, 978, 1006, 1070.

Բացառիկ վկայություն է շուրջ երկու-երեք տարվա տևողությամբ Հարունաբադ և ալ-Հարունիա քաղաքներում դրամների թողարկումը։ Հարունաբադից հայտնի են 168 (784—85), 169 (785—86), իսկ ալ-Հարունիայից՝ 169 (785—86), 170 (786—87) և 171 (787—88) տարեթվերով աբբասյան դրամներ[23]։ Դրանց վրա արձանագրված է Հայաստանի էմիր Խազիմի որդի Խուզեյմայի անունը։ Սակայն թե Հայկական լեռնաշխարհի որ մասում են եղել այդ քաղաքները՝ մինչև օրս ստույգ հայտնի չէ։ Դրամների ծագման ժամանակը և տեղանվան արմատական իմաստը ստիպում է մտածել, որ դրանք երևան են եկել Հարուն առ-Ռաշիդի գործունեության հետ կապված, նրա անունը հավերժացնելու նպատակով։ Հիջրայի 168 (784—85)—169 (785—86) թթ. Հարունը իր հոր՝ Մուհամմեդ ալ-Մահդիի և այնուհետև եղբոր՝ Մուսա ալ-Հադիի (169—170=785—786) խալիֆայության տարիներին դրամների վրա հիշատակվում էր իբրև գահաժառանգ։ Սակայն, որ Հարունաբադ քաղաքը եղել է Հայաստանում, որոշակի է ոչ միայն տվյալ տարիներին իշխող էմիրի անունից, այլև այն փաստից, որ 168 (784—85) և 169 (785—86) թթ. թողարկված այդ դրամների վրա կենտրոնական տեղում նշված է Հայաստանի արաբական անունը ارمينية[24]. Նույնը պետք է ասել և ալ-Հարունիայի վերաբերյալ. մասնավորապես նրա 169 (785—86) տարեթվով դիրհեմի վրա արձանագրված է ارمينية անունը[25]։ Աշխարհագրագետ Յակուտ ալ-Համավին հիշատակում է ալ-Հարունիան իբրև փոքր քաղաք կամ ամրոց Մարաշի մոտ, Ասորիքի սահմանագլխին[26]։ Հայկական աղբյուրները այդ մասին տեղեկություններ չեն տալիս։

Հետևաբար անմիջական ցուցմունքները Հարունաբադի և ալ-Հարունիայի մասին մեզ հաղորդում են իրենք՝ դրամները, որոնց վրա նշված է Արմինիա անունը, հավանաբար պարզաբանելու համար, որ հենց այդ երկրում էլ գտնվել են այն փողերանոցները, ուր դրվագվել են դրամները։

Հիմք ընդունելով դրամագիտական այս կոնկրետ վկայությունը, Վ. Անդերսոնը միանգամայն իրավացի ենթադրում է, որ ալ-Հարունիա և Հարունաբադ տեղանունները, լինի քաղաք թե ամրոց, վերաբերում են միևնույն տեղին և ծագել են հիջրայի 168—171 թթ. հարավային Հայաստանում, թերևս Վանա լճի ավազանում, ուր առատրի շատ հայաբնակ կենտրոններ կային[27]։ Այս տեսակետը թեև հավանական է և նորություն՝ Հայաստանում IX դարի վերջի քաղաքային կյանքի պատմության մեջ, այդուհանդերձ ենթակա է լրացուցիչ հաստատման։ Ուշագրավ է նաև Մաադին Բաջունայս փողերանոցի տեղագրության հարցը։ Այդտեղ թողարկվել են միայն արծաթ դրամներ, ըստ որում պահպանված օրինակներից ամենավաղը կրում է հիջրայի 183

---

[23] Государственный Эрмитаж, Рукописный каталог восточных монет, №№ 276, 277, 297—299, 578, 579; В. Тизенгаузен, №№ 1088—1090, 1051, 1076, 1117—1119, 1142, 1143.

[24] А. Марков, № 292, № 315; В. Тизенгаузен, №№ 1051, 1076.

[25] St. Lane Poole, I, № 133; H. Lavoix, I, № 737; W. Anderson, Der Chalifenmünzfund von Kochtel, Dorpat, 1926, № 73.

[26] «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», կազմեց Հ. Թ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 108։

[27] W. Anderson, էջ 20—23, № 73(174)։

(799—800) տարեթիվը, իսկ ամենաուշը՝ 216 (831—32)։ Շուրջ երեսուն տարվա տևողությամբ IX դարի սկզբից գործող այդ փողերանոցի տեղը երկար ժամանակ համարվում էր Հայաստանի Բագին գավառը, Ամիդից Մալաթիա տանող ճանապարհի վրա, ուր մետաղի հանքերով հայտնի էր Մաադին քաղաքը[28]։ Սակայն Մ. Ղազարյանի[29], Ն. Ադոնցի[30] և Ռ. Ֆասմերի[31] պրպտումները հիմք են տալիս կարծելու, որ باجنيس Բաջունայսը հայկական Վաժնունիք անվան արաբական ձևն է. Վաժնունիքը գտնվել է Տուրուբերան աշխարհում, Խլաթից հյուսիս։ Արաբական աղբյուրների ծանոթագրություններում Բաջունայսը հիշատակվում է Մանազկերտից արևմուտք, Ապահունիք գավառում[32]։ Ուրեմն Մաադեն Բաջունայսի տեղը հարավ-արևմտյան Հայաստանում է, Վանա ծովի ավազանի արևմտյան մասում։ Սակայն վերջնական պարզաբանությունը մնում է հնագիտության։

Փողերանոցների անվանացուցակում IX դարի սկզբին նկատվում է մի ուշագրավ լրացում։ Հիջրայի 197 (812—13) թ. Աղվանքում թողարկված արծաթ դրամների վրա տեղանունը արձանագրվում է ոչ թե ինչպես մինչ այդ, այլ مدينة ارّان («Աղվանքի քաղաքում») ձևով։ Գրավոր աղբյուրները չեն հաղորդում, թե քաղաքներից որն էր նկատի առնված։ Աբբասյանների ժամանակ Աղվանքում կային մի քանի քաղաքներ, որոնցից ամենանշանավորը Պարտավն էր։ Վերջինս IX—X դարերում լինելով առևտրի ու արհեստագործության խոշոր կենտրոն, հնարավոր է, որ դրամների վրա հիշատակվել է مدينة ارّان ձևով, ինչպես Բաղդադը հայտնի էր مدينة السلام պատվանունով։ Արաբ մատենագիրներից ալ-Մակդիսին Պարտավի մասին խոսելիս նրան բնորոշում է որպես «Բաղդադն այս երկրի»[33]։ Բացառված չէ, որ աբբասյան դրամներ կարող էին թողարկվել նաև Բայլականում կամ Գյանջայում, սակայն դրանք Պարտավի համեմատությամբ փոքր քաղաքներ էին Աղվանքի մեջ։ Նկատենք, որ مدينة ارّان տեղանունով դրվագվել են բացառապես արծաթյա դրամներ, ըստ որում այդ կարգի դիրհեմները թողարկվել են շուրջ քսան տարի տևողությամբ, առավելապես ալ-Մամունի (195—218=811—833) խալիֆայության ժամանակ։ Հետագայում տեղանվան այդ ձևը այլևս երբեք հանդես չեկավ։ Վերջին աբբասյան դրամը, որի վրա արձանագրված է مدينة ارّان («Աղվանքի քաղաքում») վերաբերում է հիջրայի 220 (835) թ.։ Եթե նկատի ունենանք,

---

28 В. Тизенгаузен, էջ XXX։

29 M. Chazarian, Armenian unter der arabischen Herrschaft, Marburg, 1903' էջ 74—75։

30 Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, էջ 314։

31 Р. Р. Фасмер, Два клада куфических монет. Труды нумизматической комиссии, VI, Л., 1927, էջ 29։

32 «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», կազմեց Հ. Թ. Նալբանդյան, էջ 29, 142։ Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 97, 287։

33 В. В. Бартольд, Сочинения, том III, Работы по исторической географии, М., 1965, էջ 372—373։

որ մինչև IX դարի կեսը Պարտավի անունով թողարկվել են միայն պղնձյա դրամներ, ապա IX դարի երկրորդ կեսից, մասնավորապես հիջրայի 267 (880—81) թ., Պարտավի անունով արծաթ դրամների հանդես գալը թույլ է տալիս ենթադրելու, որ նախապես (197—220 թվերին) եղած مدينة ارّان տեղանունը դարձել էր ավելի կոնկրետ և ներկայացվել էր արդեն որպես بردعة (Պարտավ)։ Քաղաքային կյանքի զարգացումը և ընդհանրապես քաղաքների դերի նշանակության բարձրացումը IX դարի վերջերին հավանական է դարձնում նրանց անունով արծաթ դրամների մասսայական թողարկումը, որոնք շրջանառության մեջ միջազգային տարածում ունեին։ IX դարի վերջին Պարտավում թողարկված աբբասյան դրամները իրենց առանձին օրինակներով հաղորդում են խիստ հակիրճ, վարչա-տերիտորիալ բնույթի լրացուցիչ տվյալներ։ Այսպես օրինակ՝ պահպանվել են հիջրայի 267 (880—81)[34], 270 (883—84)[35] և 277 (890—91)[36] տարեթվերով, խալիֆ ալ-Մուտամիդի ու նրա գահաժառանգ եղբոր՝ ալ-Մուվաֆֆաք Բիլլահի անունով արծաթ դրամներ, որոնց վրա արձանագրված է ضرب هذا الدرهم بارمينية («...դրվագված է այս դիրհեմը Արմինիայում...»)։ Միաժամանակ այդ նույն արծաթ դրամի կենտրոնում նշված է Պարտավ քաղաքի անունը՝ بردعة ձևով։ Սովորաբար Արմինիայում թողարկված աբբասյան դրամների վրա Պարտավի կամ որևէ քաղաքի անունը չէր հիշատակվում։ Այս արտակարգ հիշատակությունը ցույց է տալիս, որ տրադիցիան խախտվել էր և Դվինից բացի նահանգի անունով արծաթ դրամներ կարող էին թողարկվել Պարտավ քաղաքում։ Վերջինիս անունը արձանագրված է հատուկ ձևով խալիֆի՝ ալ-Մուտամիդ Ալալլահի الله المعتمد على պատվանվան տակ։

Հայկական քաղաքներից դրամներով հիշատակված է նաև Բիթլիսը, որի անունը կրոշմված է հիջրայի 301 (913—14) թ. Աբբասյան խալիֆ ալ-Մուկտադիր Բիլլահի (295—320=908—932) հրամանով թողարկված արծաթ դրամի վրա[37]։ IX—X դարերում Հայաստանից դուրս, սակայն հայկական բնակչություն ունեցող քաղաքներից աբբասյան դրամներ թողարկվել են նաև հիջրայի 304—323 (916—17=934—35) թ.՝ Ամիդում[38], 312 (924—25) թ.՝ Մարդինում[39] և 253—334 (867—945) թ.՝ Մծբինում[40] نصيبين.

Արմինիա նահանգում VIII—X դդ. թողարկված աբբասյան դրամների աղյուսակները տե՛ս «Հանդեսի» հավելվածում։

---

[34] В. Тизенгаузен, № 2043; А. Марков, № 861А.

[35] H. Nützel, I, № 1548.

[36] В. Тизенгаузен, № 2097; H. Nützel, I, №№ 1549, 1550; А. Марков, № 876.

[37] В. Тизенгаузен, № 2898.

[38] Նույն տեղում, №№ 2252, 2284, 2402, 2403։

[39] Նույն տեղում, №№ 2304 (ոսկեղրամ)։

[40] Նույն տեղում, №№ 1964, 1970, 1971, 1993, 2014, 2048, 2127, 2135, 2156, 2195, 2207, 2231, 2239, 2253, 2271—77, 2286, 2291 և այլն։

ВЫПУСК АББАСИДСКИХ МОНЕТ В ХАЛИФСКОЙ ОБЛАСТИ «АРМИНИЯ» В VIII—X ВВ.

Х. А. МУШЕГЯН

(Резюме)

Со второй половины VIII в. денежное обращение в Армении вступило в новую фазу своего развития, связанного с распространением куфических монет Восточного Халифата. В главных экономических и военно-административных центрах междуречья Аракса и Куры чеканились медные и серебряные монеты аббасидского типа. Монеты выпускались по денежно-весовой системе Халифата. Основной единицей была серебряная монета (дирхем) с законным весом 2,97 г чистопробного серебра. На каждом экземпляре было обозначено религиозное изречение, характерное для мусульманского вероисповедания, а также данные о том, где и когда была выпущена монета. Арабские надписи на монетах исполнялись куфическим шрифтом строгого стиля. Аббасидские монеты армянского выпуска типологически не отличались от подобных монет, чеканенных в остальных областях аббасидского владычества. Золотые аббасидские монеты в Армении и прилегающих к ней краях Закавказья не выпускались. Массовый выпуск аббасидских монет в Армении наблюдается с конце VIII в. Дирхемы чеканились не только в Двине и Партаве, но и в ал-Харунии, Харунабаде и Мааден-Баджунейсе. Типологические данные аббасидских монет VIII—IX вв., выпущенные в Армении, позволяют судить о хронологии арабских правителей эпохи Аббасидов. Кроме чисто религиозных изречений мусульманского толка, на них обозначены имена халифов, престолонаследников и местных эмиров. Медные аббасидские монеты, чеканенные в городах Закавказья, являются важными памятниками, отражающими экономические связи в сфере внутренней торговли. Как всегда, таковые выпускались для обслуживания потребностей местного рынка. Показания аббасидских фельсов армянийского чекана важны для наблюдения местных особенностей истории VIII—IX вв.

Нумизматические данные об аббасидских монетах, выпущенных в области Армения в VIII—X вв. см. в приложении журнала.